

ԿՐՕՆԱԿԱՆ

ԻՆԳՆԱՏԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Հին Կտակարանի Մարգարեական գրքերու կամ նոր Կտակարանի Աւետարաններու ու զանազան նամակներու մեկնութիւնները, դարերու ընթացքին կատարուած են շնորհաշատ եւ եռամեծար հայրապետներու հեղինակութեամբ: Հայոց մատենագրութեան պատմութեան մէջ, մեկնողական գործերը, գրական կարելոր եւ յատուկ սեռ մը նկատուած են:

Նպատակը անշուշտ ուսուցողական է եւ առաքելական գործ կը համարուի հեղինակին կողմէ: Հայոց մատենագրութեան մէջ գրական այս սեռը մշակողները, առհասարակ կը ներկայացնեն Ս. Գրոց մասին հիացնող հմտութիւն, խոր հաւատք եւ օրինակելի ջանասիրութիւն:

Քաղաքական, ընկերային, տնտեսական ամենալատ պայմաններու եւ անստոյգ ապագայի երկիւղին մէջ աշխատեցան մեր մատենագիրները, շրջապատուած թշնամիներով:

Մեր գրասեղանին վրայ պատրաստ թուրքի դէզեր ունինք: Ունինք ինքնահոս գրիչ եւ բառարաններ, համաբարբառ: Կոճակի մը վրայ սեղմելով, կ'ստանանք առատ ելեկտրական լոյս: Եկեղեցւոյ երանեալ հայրերը որոնք մեկնողական փառաւոր եւ հմտալից հոգեւոր հատորներ հեղինակեցին, ձեթով լապտերի ներքեւ, ցուրտին կամ տօթ եղանակին, փետուրէ գրչով եւ մուրով, կենդանի մորթի վրայ գրեցին: Գրեցին հաւատքի ջինջ ակունքէն ըմպելով, պահեցողութեամբ եւ աղօթանուէր կենցաղով:

Այսպիսի գործ մըն է Ինգնատիոս Եպիսկոպոսի Ղուկասու Աւետարանին մեկնութիւնը:

Ո՛ր է եւ ե՞րբ ապրած է պատուական սակայն նուազ ծանօթ այս հոգեւորականը:

Ժամանակակից է ու դասընկերը Ս.Ներսէս Ծնորդալիին կամ Կլայեցիին: Ինչպէս Անիի տէր, աշխարհաշէն ու աշխարհակալ Բագրատունիները, այնպէս ալ Պահլաւունիները եղած են ուսումնասէր:

Իմաստուն կամ իմաստասէր կոչուած է Յովհաննէս Սմբատ Բագրատունի Թագաւորը: Գրիգոր Մագիստրոսի բարեկամներէն Անիի Սարգիս վարդապետը իր գիտութեամբ, յայտնի հոետոր եղած է: Գր. Մագիստրոս իր մէկ նամակին մէջ կը գրէ, «հօգր հոետոր եւ գլուխ իմաստասիրաց, կարօտեալ կամ բանի թում եւ գրի» (1): Ընդհանրապէս ընդունուած է որ Գրիգոր Պահլաւունի Մագիստրոսով կ'սկսի միջնադարեան վերածնունդի մէկ նոր շրջանը հայ

մատենագրության մէջ: Իր երկու որդիներն են Վահրամ եւ Գրիգոր վկայասէր, կաթողիկոս ձեռնադրուած 1065-ին:

Սելճուք թուրքերու Հայաստան արշաւելու ժամանակ, հայկական իշխանութիւնները, ներքնապէս պառակտուած, կործանեցան: Բիւզանդական կայսրութիւնն ալ Հայաստանը պարպեց իր բնակչութենէն սխալ քաղաքականութեամբ, ուստի ժողովուրդը եւ ղեկավարութիւնը գաղթեցին արեւմուտք:

Ռընէ Կրուտ ֆրանսացի հեղինակը, Հայոց Պատմութիւն իր ծանօթ գրքին մէջ կը հաւաստէ, թէ հայերը Հայաստանի մէջ Բիւզանդական կայսրութեան Արեւելեան մասը կը պաշտպանէին: Բիւզանդական կայսրերու հայահալած քաղաքական սխալ քաղաքականութեամբ Կեդրոնական Ասիայէն դէպի փոքր Ասիա ներխուժող հորդաները, կործանեցին Հայաստանն ու ապա Բիւզանդական կայսրութիւնը, եւ ի վերջոյ մտան կայսրութեան մայրաքաղաքը Բիւզանդիոն կամ Կ.Պոլիս, 1453-թուին: Արիստակէս Լաստիվերտացին կը գրէ թէ «անոնք որոնք չմեռան, մոլորական աստղերու նման ցրուեցան»: Շատեր կայք հաստատեցին Կիլիկիոյ մէջ, Տաւրոսեան անառիկ լեռներուն վրայ, կազմելով կիսանկախ իշխանութիւններ: Գրիգոր Մագիստրոս Պահլաւունիի մէկ աղջկան զաւակն էր Ապիրատ Պահլաւունին, Գրիգոր Կաթողիկոսի եւ Ս.Ներսէս Շնորհալիի հայրը: Տաւրոսեան լեռներու մէկ ճիւղին, Սեաւ լեռան վրայ հաստատուած Կարմիր կամ Ծովք վանքին մէջ Գրիգոր վկայասէրը ապրեցաւ:

Գրիգոր Վկայասէր, խնամեց, կրթեց իր քրոջ որդի Ապիրատ Պահլաւունիի Գրիգոր եւ Ներսէս զաւակները, որոնք իրարմէ մօտ տասը տարու տարբերութեամբ ծնած պէտք է ըլլան 12-րդ դարու սկիզբը:

Վկայասէր իր վախճանումէն առաջ, Անիէն կը հրաւիրէ Բարսեղ Հայրապետը, դարձեալ Պահլաւունի որպէսզի ուսումնատենչ այս զոյգին կրթութիւնը շարունակուի, իր հսկողութեամբ:

Քեսուռի մօտ, Կարմիր վանքը ունեցած է ուսումնական վարդապետներ(2): Ամենէն հռչակաւորը Ստեփաննոս Մանուկ գիտնական Եպիսկոպոսը որ շատ երիտասարդ տարիքին, սկսելով հռետորաբար քարոզել, Եպիսկոպոս ձեռնադրուած եւ ստանձնած է երկու եղբայրներու կրթութեան գործը: Այս վանքին կամ վարդապետարանին մէջ իրենց հետ ուսումնակից կամ դասընկեր եղած են նաեւ Սարգիս Շնորհալի (3), Իգնատիոս վարդապետ, Բարսեղ Շնորհալի(4):

2.- Մանուկ Աբեղեան. երկեր. հատոր Դ. էջ 99, Երեւան 1970

3.- Սարգիս Շնորհալին գրեց Կաթողիկէ թուրքերու մեկնութիւնը «քաղցր բանիւք եւ երկար յորդորակօք»:

4.- Ղ.Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր էջ 50, Վեներիկ 1873

Մանուկ Աբեղեան կը գրէ, թէ իրենց արդիւնաշատ գործունէութեամբ նշանաւոր վարդապետներուն Շնորհալի կոչում տալը, մտածել կուտայ թէ Շուղրի կամ Քեսուհի Կարմիր վանքին մէջ պատուանուն մըն էր այդ, ինչպէս Սիւնեաց դպրեւանքին մէջ քերթող կամ իմաստասէր կոչումը պատուանուն նկատուած է:

Քաղաքական խառնակ այս ժամանակաշրջանին Պաղլաւունիները լատին իշխաններէն գնած են Հռոմկլայ բերդը եւ հոն ալ հաստատուած, Եփրատ գետի աջ ափին եւ Եղեփոյ արեւմուտքը: Այստեղ ալ հիմը դրուած է արդիւնաշատ գործունէութեան: Ս.Ներսէս Կլայեցիի եղբայրը, Գրիգոր Կաթողիկոս Պաղլաւունի, ըստ Կիրակոս Գանձակեցի Պատմիչին, «շինեաց եկեղեցի հրաշագան գմբէթայարկ ի նոյն բերդի»⁽⁵⁾ ձեռնարկելով թարգմանութիւններու եւ կազմելով գրադարան, «բազում գիրս ետ թարգմանել ի հայ լեզու, զորն ինքեամբ եւ զորն ի ձեռս այլոց»:

Քաջալերած է նաեւ որպէսզի վարդապետները երկեր յօրինեն. օրինակ քաջալերած է Սամուէլ Անեցին որպէսզի գրէ Ժամանակագրութիւնը ⁽⁶⁾:

Նմանապէս յանձնարարած է Ինգնատիոս վարդապետին որպէսզի յօրինէ Ղուկասու Աւետարանին մեկնութիւնը: «Ըստ գրասէր բարուց իւրոյ հրամայեաց ուսումնակցին իւրում, հանճարեղ վարդապետիս Իգնատիոսի, մեկնել զսուրբ Աւետարանն Ղուկասու»:

Կիրակոս Գանձակեցի պատմիչը կը գրէ թէ Ինգնատիոս նախ յանձն չառաւ հայրապետին խնդիրքը կամ յանձնարարութիւնը յօժարակամ կատարել, զինք այս գործին համար տկար համարելով «վասն այսմ գործոյ անբաւական զինքն կշռելոյ»: Գիշեր մը սակայն երազ տեսաւ. ընդարձակ եւ լուսալիր սրահի մը մէջ բազմած են եկեղեցւոյ բարեջան վարդապետները եւ ցնծութեամբ խրախճանքի մէջ են: Ինքն ալ փափաքեցաւ ներս մտնել: Արգիլեցին իր մուտքը ըսելով. «դուն չկամեցար Ս. Աւետարանին մեկնութեան վրայ աշխատիլ, «ոչ մտցես այսր, չունելով ընդ մեզ մասն ի վայելմանէս»: Արթննալով իր քունէն, զղջաց եւ ձեռնամուխ եղաւ Հայրապետին յանձնարարութիւնը կատարելու, գրել մեկնութիւնը, որուն յառաջաբանին մէջ կը գրէ. - «Աստուածային իմաստը բացատրելու քու փափաքդ պարտք համարեցի կատարել, ով Գրիգորիոս Քահանայապետական գլուխ եւ սին հաստատութեան եկեղեցւոյ: Սակայն միշտ ալ հակաճառողներ կան: Երբ որ

5.- Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց էջ 111, Երեւան 1961

6.- Մանուկ Աբեղեան երկեր. Հատոր Դ. էջ 103, Երեւան 1970

մեկնությունը երկար գտնեն, կը փափաքին կարճը լսել: Իսկ եթե կարճ կամ ամփոփուած ներկայացնեն, իմաստը բաւականապէս չի պարունակեր կ'ըսեն եւ կը պարտաւեն: Երբ նրբօրէն գրեն, պարզը կ'ուզեն եւ դիրաճառը կը պահանջեն: Երբ պարզ գրեն, կը գովեն իմաստասէրներու իբրեւ թէ արուեստական ու զօրաւոր բառերը»:

Մօտաւորապէս հարիւր յիսուն տարիներէ ի վեր բանասէրներ աշխատեցան գոյութիւն ունեցող ձեռագրեր վերականգնելու, քերականական, լեզուական եւ այլ գրչագրողներու վրէպները սրբագրելու, թուականներ ճշգրտելու, ելն, ելն:

Ինգնատիոս Եպիսկոպոսի սոյն Ղուկասու մեկնութեան գործին առընչութեամբ, ձեռագրերու բաղդատական առաւելութիւններով կամ թերութիւններով զբաղելէ աւելի, զայն կը ներկայացնենք ընթերցողներուն:

Մեր շուրջ, ամէն օր, ամէն տեսակ գրականութեան կը հանդիպինք: Կը կարդանք անյազուրոյ: Սակայն դժբաղդաբար մեր ընթերցումներէն կը պակսի հոգեւոր գրականութիւնը: Տեսած եմ, փորձով գիտեմ ու կը վկայեմ այս մասին: Ս. Գիրքը չենք կարդար, շատ շատ... բարձին տակ կը պահենք, ընդ գրումնաւ:

Աւետարանը Աստուծոյ խօսքը եւ ամբողջական յայտնութիւնը կը բերէ մեզի: Ղուկաս... Հեթանոսաց համար գրած է իր Աւետարանն ու Գործք Առաքելոցը: Քարոզիչները կ'ըսեն թէ, ինչպէս որ տեսակ տեսակ ախտեր կան ապականիչ կարողութեամբ, այնպէս ալ Սուրբ գրքերը պէս պէս փրկարար ներգործութիւն ունին: Իսկ Աստուածաշունչի բոլոր գրքերէն գերազանց է, ամենքէն պայծառ, ամենահարուստ, փրկաւետ եւ կենդանարար, Քրիստոսի Ս. Աւետարանը: «Որովհետեւ ամենիմաստ Քրիստոսի վարդապետութիւնը, բոլոր օրէնքներէն, պատուիրաններէն եւ խրատներէն գերիվեր ըլլալով գերափայլեալ կը ճառագայթէ»: Ապացոյցներու ալ կարիք չկայ. այս պարագան արեւի նման պայծառ ճշմարտութիւն ըլլալով: Ուրիշ գրքեր Աւետարանին համեմատելով կը նմանին լուսնին, արեւին բաղդատմամբ: Այս գանձը ուրեմն մեկնութեան կարիքը ունի Ձեզի համար սիրելի ընթերցողներ: Կը ներկայացնեմ զայն աշխարհաբար լեզուով:

ԶԱԿԷՆ ԱՐՔԵՊՍ. ՉԻՆՉԻՆԵԱՆ